

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

---

## Հայկազ Հովհաննիսյան

### ՍՈՒՐՄԱԼՈՒ ԳԱՎԱՌԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Բանալի բառեր - Սուրմալու, տնտեսության ճյուղեր, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, հարկային համակարգ, զարգացման առանձնահատկություններ:**

Հաճախ Հայաստանի սոցիալ-տնտեսական իրադրությունը ներկայացնելիս ընթերցողի մոտ տպավորվում են միայն վիճակագրական տվյալները, որոնք թեպետ ապահովում են հիմնախնդրի ընդհանուր պատկերային կողմը, սակայն՝ պատմական նշանակության կարևոր շատ մանրամասներ դուրս են մնում շարադրանքից: Ավելին, մեր համոզմամբ, թեպետ 19-րդ դարի վերջին Արևելյան Հայաստանում սոցիալ-տնտեսական առումով գրեթե միևնույն միջավայրն էր, այդուհանդերձ, առանձին մարզերի զարգացման առանձնահատկությունները բավականին նկատելի էին:

Ներկա հոդվածում մեջ մենք փորձել ենք հիմնախնդիրը ներկայացնել պատմական բերումով հայկական երկու հատվածների սահմանագծին հայտնված Սուրմալու գավառի օրինակով: Այն, անշուշտ, քաղաքական թելադրանք ունի. վերջին ժամանակներում աշխուժացել են ադրբեջանցի և թուրք պատմաբանների այն պնդումները, թե Սուրմալու գավառի արտադրողական հիմնական ուժերը իրենց նախնիներն են եղել:

Մեր ուսումնասիրությունը սկսում ենք Սուրմալուի գավառի տնտեսական հիմնական ոլորտից՝ գյուղատնտեսությունից: Ժամանակի վիճակագրական բոլոր տվյալները հաստատում են, որ Սուրմալու գավառի բնակչության գերակշռող մասը՝ գրեթե 98 տոկոսը, եղել են երկրագործներ և միայն երկու տոկոսն են կազմել արհեստագործներն ու առևտրականները<sup>1</sup>: Վերջիններս առավելապես ապրել են գավառական կենտրոն Իգդիր գյուղաքաղաքում: Այլ խոսքով՝ Սուրմալուն առավելապես հայտնի է որպես գյուղատնտեսական երկրամաս: Ինչպես ասվում է ռուսական հրատարակություններից մեկում, «Սուրմալուն Երևանի նահանգի ամենից բարեբեր ու բնակեցված գավառն է...»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> См. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1886, т.3, с.305.  
<sup>2</sup> Лихутин М., Русские в Азиатской Турции, СПб, 1863, с.14.

1886թ. տվյալներով Սուրմալուի մշակովի հողերը կազմել են 52.583 դեսյատին: Հողերի ամենամեծ սեփականատերերը հանդիսացել են հայերը: Ունևոր շատ հայեր իրենց հողերը *վարձակալման են հանձնել թուրքերին և քրդերին* /ընդգծումը մերն է՝Յ.Յ./ : Այսպես, Արհաջ թուրքական գյուղը վարձակալել է Ավետիս Տեր-Գաբրիելյանին պատկանող 120 դեսյատին վարելահողը: Նույն կարգով քրդերը վարձակալել էին Քանանյանին պատկանող 80 դեսյատին հողատարածքը՝ տարեկան 80 ռուբլի վարձավճարով<sup>1</sup>: Ուրեմն այստեղից մեկ եզրահանգում է հետևում միայն. հողերի տերերը հնուց ի վեր եղել են հայերը և որոշ ժամանակով միայն դրանք հանձնել են տեղի թուրք-քրդական տարրերին: Ուշադրություն պետք է դարձնել նաև այն հանգամանքին, որ վկայությունը բերված է ոչ թե հայկական, այլ ռուսական աղբյուրից, ինչը մեր ընդդիմախոսներին զրկում է մեր կողմից՝ կողմնակալ աղբյուրներ ներկայացնելու մեղադրանքից:

Հողը մշակելու համար այն ժամանակվա տեխնիկայի պայմաններում գյուղացուն առաջին հերթին հարկավոր էր քաշող ուժ: Ամենատարածված միջոցը բնականաբար եղել է այսպես կոչված լծկանների վարձակալությունը: Ընդ որում, հաշվումները ցույց են տալիս, որ հայ գյուղացու վրա այդ վարձակալությունը նստում էր նվազագույնը 470 ռուբլի. երկու ցուլի վարձակալությունը տարեկան կտրվածքով կազմում էր 180 ռուբլի, եզինը՝ 200 ռուբլի, արորը՝ 70, մյուս անհրաժեշտ գործիքների համար՝ 20 ռուբլի: Ավելորդ է ասել, որ հազվադեպ և այն էլ միջին կարողության տեր գյուղացին միայն կարող էր իրեն այդպիսի շռայլություն ցույց տալ կամ գնել դրանք: Ուստի գյուղացիների մեծամասնությունը պարզապես վարձակալել է դրանք: Նույն աղբյուրի համաձայն՝ արորի վարձակալության համար տերը պահանջել է 60 կոպեկ, կամ 5 օր օգտագործելուց հետո 6 օրը պետք է ձրի աշխատեր արորի տիրոջ համար: Ի դեպ, առավոտյան ժամը 4-ից մինչև ուշ երեկո գյուղացին արորով կարող էր վարել մեկ հեկտար և քիչ ավելի՝ 1000-1200 քառ.մ հող<sup>2</sup>:

**Հիմնական մշակաբույսերը:** Սուրմալուում մշակվող բույսերի մեջ առաջինը **բրինձն էր**, որ հայերի մեջ ավելի շատ տարածված էր **չալթուկ** անունով: Նրա մշակումը եթե մի կողմից հետաքրքիր էր, սակայն մյուս կողմից բավական դժվար և աշխատատար է եղել: Գյուղացին նախ 10 օր շարունակ պետք է ջուր բաց թողներ բրնձի համար նախատեսված հողատարածքում: Հողն այդ ընթացքում համարյա վեր էր ածվում իսկական տիղմի: Այնուհետև գյուղացին իր ընտանիքի անդամների հետ ջրով լցված այդ հողամասում պետք է հեռացներ մոլախոտերը: Դրանից հետո միայն տնկվում էին բրնձի սածիլները: Ինչպես նկատել է այդ գործընթացի ականատեսներից մեկը, «պետք է

<sup>1</sup> Տե՛ս՝ Материалы для изучения..., с.307.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 311:

միայն տեսնել աննկարագրելի դժվար այդ գործը, որպեսզի հետագայում գնահատի հացի այն կտորը, որը հասնում էր գյուղացուն այս ամենից հետո: Բավական է ասել, որ տաս քայլ այն կողմ աշխատող հայրը չի ճանաչում հարազատ որդուն, որն իրենից ներկայացնում է ուղղակի շարժվող ցեխոտ մի զանգված»<sup>1</sup>: Պետք է նկատի ունենանալ, որ չալթուկի սածիլման լավագույն ժամանակը համարվում էր մայիս ամսվա առաջին շաբաթը: Իր բերքի արդյունքները գյուղացին կարող էր ստանալ միայն հոկտեմբերի առաջին տասնօրյակին, երբ սկսվում էր բերքահավաքը: Նկատենք նաև, որ չալթուկը նույն տեղում կարելի էր մշակել միայն երկու տարի: Երրորդ տարում այդ հողակտորն արդեն դրվում էր հացահատիկի ցանքսի տակ: Միջին հաշվով գյուղացիները մեկ դեսյատին հողի կտրվածքով ստանում էին 7- 7,5 փուլ բրինձ: Եթե փորձենք հաշվել գյուղացու եկամուտը, կստացվի հետևյալ պատկերը. 1 փուլ բրինձն այդ ժամանակ արժեր 70 կոպեկ, գյուղացու եկամուտը տաժանակիր աշխատանքի դիմաց կազմում էր ընդամենը 100 ռուբլի: Չպետք է մոռանալ, որ չալթուկի կամ անմշակ բրնձի մշակությունը բերում էր այնպիսի մի սարսափելի հիվանդություն, ինչպիսին մալարիան էր:

Հացահատիկային մշակաբույսերից բնականաբար առաջնային տեղը գրավում էր ցորենը: Կապված տարվա եղանակների հետ՝ չորային կամ անձրևային, այս տեսակի գյուղմթերքների գները մեծ տատանումներ են ունեցել: Որպես կանոն, մինչև բերքահավաքը հացահատիկի գները հասնում էին մինչև 60 ռուբլի, իսկ բերքահավաքի ժամանակ իջնում 35-40-ի: Հացի գները տատանվում էին մեկ այլ պատճառով նաև. երբ հարևան Բայազետում սով էր սկսվում, ինչպես օրինակ, 1900 թվականին, գավառի հացի պաշարի մեծ մասը քուրդ վաշխառուների միջոցով /հայերին արգելված էր այդ գործը/ տարվում էր Բայազետ և վաճառվում 100-120 ռուբլով: «Մոտ օրերս Իգդիր էր եկել Բայազետի հարյուրապետը /ուշադրություն դարձրեք՝ խոսքը թուրք հարյուրապետի մասին է - Յ.Յ./ իր զինվորներով: Ասում են հացի համար է եկել», - գրում էր «Մշակը»<sup>2</sup>: Հացաբույսերի գների տատանման մեկ պատճառ էլ կար. նպաստավոր եղանակային պայմաններում, օրինակ, գարու խալվարի գինը, իսկ դա 30 փուլ էր, իջնում էր 3-7 ռուբլով, իսկ ցորենի խալվարի գինը 12-18 ռուբլով: Երաշտի տարում, ընդհակառակը, գարու գինը բարձրանում էր 15-30 ռուբլով, ցորենինը՝ 30-50 ռուբլով<sup>3</sup>:

Բնականաբար, որպես հարթավայրային գոտի, Սուրմալուն հայտնի էր իր խաղողագործությամբ: Այգեգործությունը համարվել է Սուրմալուի գյուղատնտեսության այցեքարտերից մեկը: Գավառի հողերի ընդհանուր ցանքսերից խաղողի տակ էր դրված 1195 դեսյատինը: Արարատյան դաշտավայրում խաղողի հայտնի տեսակներից այստեղ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 316:

<sup>2</sup> «Մշակ», 1900, N133, 28 հունիսի:

<sup>3</sup> Նույն տեղում, 1888, N 65:

տարածված են եղել խարջին, ասկյարին, քիշմիշը, իծան պտուկը, խաչաբաշը, խալիլը և եզանդարը: Այս սորտերից պատրաստվել են ընտիր գինիներ: Ընդ որում, գինու մեկ դուլը, որը 8-10 լիտր էր, վաճառվել է 80 կոպեկով: Սուրմալուի խաղողը իր հատկություններով մրցել է Երևանի և Գանձակի խաղողի հետ: Այստեղ մշակված տեսակներից բավականին համբավ է ունեցել նաև Դուբնա կոչվող խաղողի տեսակը:

Գավառի գյուղատնտեսական ցանքատարածությունների մեջ մեծ տեղ են զբաղեցրել նաև բոստանային կուլտուրաները և պտղատու այգիները: Սուրմալուն հռչակված է եղել իր ծիրանով, դեղձով, տանձով, թուփով և խնձորով: «Սուրմալուի գավառով անցնողը,-գրում է «Մշակի» թղթակիցը,- այն երանությունն է զգում, որ այս երկրի ժողովուրդը ամենաերջանիկն է աշխարհիս երեսին: Նայեցեք ցորենի արտերին. դրանք արդեն մայիսի սկզբին վեց վերշոկ բարձրություն ունեն, այգիները այնպես են գեղեցկացել պտղատու ծառերի բացված ծաղիկներով և առատ բերք են խոստանում, որ նրանց մեջ զբոսնողը եղենական դրախտի մեջ է իրեն կարծում »<sup>1</sup>: Գիշտ է, քիչ չափազանցված է, սակայն որ սուրմալվեցին մշակում էր սիրտն ու հոգին չխնայելով, կասկած չկար: Ընթերցողին, բնականաբար, կհետաքրքրի պտուղների այն ժամանակվա գները. այսպես, մեկ փուֆ ծիրանն արժեր 20-60 կոպեկ, դեղձը՝ 40-80, տանձը՝ 1-2 ռուբլի, թուփը՝ 20-40 կոպեկ: Փաստորեն ամենից թանկ արժեցել է տանձը:

Մշակության իր ծավալներով գավառում համենատաբար մեծ տեղ է զբաղեցրել նաև բամբակը: Բամբակը Սուրմալուում սովորաբար ցանում էին մարտի վերջերից մինչև մայիսի 15-ն ընկած ժամանակամիջոցում: Մշակված բամբակը արտահանվում էր Թիֆլիս և Թուրքիայի զանազան քաղաքներ, ինչպես, օրինակ, Էրզրում, Կարս, Կ.Պոլիս և այլն: Սուրմալուում մշակել են երկու տեսակի բամբակ՝ տեղական, որը կոչել են ղարաղոզ և ամերիկյան: Վերջինիս կեղևը կպած էր ցողունին և բամբակը հանում էին միանգամից, իսկ տեղական բամբակը մշակել են տանը և տվել են «կորիզով» անունը: Վատ մշակված կամ չբացված բամբակին գյուղացիք անվանում էին լուլ կամ քուլա: Տեղացիները դրանք հետագայում փռում էին արևի տակ և երբ այն բացվում էր, բամբակը հանում էին և փոխում բրնձի, պանրի, մեղրի և այլ մթերքների ու պիտույքների հետ:

Բամբակի մշակման ամենից դժվար և աշխատատար գործը քաղհանն էր: Քաղհան անողները սովորաբար կանայք և աղջիկներն էին. երեք քաղհանողները միասին կոչվել են «մարգավոր»: Քաղհանի հիմնական գործիքը ուրագի ձև ուներ և կոչվում էր թակուջակ /այսօր էլ Արարատյան դաշտի ժողովուրդը քաղհանի ուրագին թակուջակ է ասում - Յ.Յ./: Իհարկե, ամեն քաղհանավոր չէր, որ կարող էր ուրագը վարպետորեն բանեցնել, չվնասելով բամբակը: Բամբակը կորիզից անջատելու կամ բաժանելու

<sup>1</sup> Նույն տեղում:

համար անցկացնում էին «չարխի» միջով: Տեղացիները հաշվել են, որ 12 փուլ բամբակը չարխելուց հետո կորչում է նրա 30 տոկոսը, այսինքն՝ 3 - 4 փուլը: Բամբակի փուլը սովորաբար վաճառվել է 6,5-7 ռուբլով, ամերիկյան սորտը վաճառվել է 1-2 ռուբլով ավելի թանկ, քանի որ նրա բերքատվությունը տեղականից ցածր էր, սակայն ավելի որակյալ էր, քան տեղականը:

Գավառում բավականին տարածված է եղել քնջութի մշակությունը, որից գյուղացիները յուղ են պատրաստել: Սուրմալվեցիք այն անվանել են **շիրբուխտ**: Վերջինիս 1 փուլը վաճառվել է 5,50- 7,50 կոպեկ: Արտահանման հիմնական շուկան եղել է Երևանը և Թիֆլիսը:

Մշակաբույսերի մեջ կարևոր տեղ են գրավել նաև վուշը և ծխախոտը: Վերջինս մշակում էին գավառի Արիաջ, Սուկի և Ագարակ գյուղերում: Ամենից հայտնին դրանց մեջ Արիաջի ծխախոտն էր, որի մեծաքանակ սպառողները թուրքերն էին: Սուրմալուի ծխախոտը համարվել է լավագույններից մեկը տարածաշրջանում, սակայն գրեթե վաճառքի հանվել: Ուստի ցանել են այնքան, որքան բավականացրել է ներքին գործածության պահանջները հոգալու համար:

**Մեղվաբուծությունը** Սուրմալու մտավ ավելի ուշ՝ XIX դարի վերջերին: Ի դեպ, «Մշակ» թերթն այդ իրադարձությունը նշում է որպես ուրախալի փաստ. «...Սուրմալուի գավառի Ալի-Ղամարլու գյուղում ուսուցիչ Մարկոս Բաղալյանը առաջին անգամ սկսեց պարապել մեղվաբուծությամբ և ամեն կերպ աշխատում է համագյուղացիներին մասնակից դարձնել այդ գործին: Առաջին փորձը առաջ է գնում... և շարժել է շատերի նախանձը...»<sup>1</sup>:

**Շերամապահությունը** ևս բավականին ուշ մուտք գործեց գավառ, թեպետ ինչպես նշում է «Մշակը», դեռևս 1870-ական թվականների կեսերին կալվածատեր Ալեքսանդր Մելիք-Վարդանյանը այստեղ նախաձեռնել էր թթենիների մի ընդարձակ անտառի տնկում՝ գավառում շերամապահությունը զարգացնելու նպատակով: Որքան էլ սպասելի չէր, հետագայում շերամապահությամբ զբաղվելու փորձեր են կատարում նաև գավառի կանայք՝ Շուշանիկ Հարությունյանը և Զարուհի Ավագյանը, Իգդիրի ուսումնարանի վարժուհի Մարիամ Բաբայանը<sup>2</sup>:

Սուրմալուի գյուղատնտեսական մյուս կարևոր ճյուղը **անասնապահությունն** էր: Անասնապահությամբ հիմնականում զբաղվել են լեռնային շրջաններում, թեպետ հարթավայրային մասերում ևս գյուղացիները իրենց տնտեսական կարիքների համար պահել են խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Որպես կանոն, հովիվներ ընտրել են առավել փորձված մարդկանցից, հաճախ ընտրության գործում կարևոր է եղել այն, թե

<sup>1</sup> Նույն տեղում, 1901, N121

<sup>2</sup> Նույն տեղում:

վերջինս ինչպես է գլուխ հանել անասունների հիվանդություններից և կարող էր տեղում անհրաժեշտ օգնություն ցույց տալ: Մյուս կողմից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ անասնագործությունը հանցագործությունների մեջ գերակշիռ մաս էր կազմում, ուստի հաշվի էր առնվում հովիվների ընտրության հարցում: Հովիվների վարձը հիմնականում կատարվել է բնամթերքով, երբեմն նաև՝ դրամով: Այսպես, օրինակ, 20 գլուխ ոչխարից մեկը հովվին էր: Բացի դրանից, գյուղացիները նրան ապահովում էին նաև օրահացով և նույնիսկ հագուստով: Նախրապաներին, օրինակ, տալիս էին ցորեն, բրինձ, իսկ շաբաթը մեկ անգամ նաև օրահաց: Հովիվների գերակշիռ մասը քրդեր էին, քանի որ սովոր էին խաշնարած կյանքի և բավական փորձառու էին ու թրծված: Բնականաբար, անասնապահությամբ զբաղվողները մշակել են նաև **առվույտ**:

Անասունների գները գավառում տատանվել են հետևյալ սահմաններում. եզր վաճառվել է 30-80 ռուբլի, կովը՝ 15-30, ցուլը՝ 25-40, ձին՝ 20-200, կթու ոչխարը՝ 4-6, գառը՝ 1-1,50, խոզը՝ 10-40, այծը՝ 2,50-5, էջը՝ 5-20 ռուբլի:

Սուրմալուն հայտնի էր իր **աղահանքերով**: Ամենահայտնիներից մեկը **Կողբի աղահանքն** էր, որը գտնվում էր Իգդիրից 40 վերստ հեռավորության վրա: Աղահանքը գտնվում էր Վարդան կոչվող գետի աջ ափին: Աղը արդյունահանել են պայթեցումների միջոցով: Բանվորները բերով ծակում էին աղաքարը որոշակի խորությամբ և նրա մեջ լցնում էին չափավոր քանակությամբ վառող, որը մի քանի վայրկյանից հետո աղասալերը վեր էր ածում բազմաթիվ մանր կտորների: Մի քանի տասնյակ մշակներ ավանակներով կամ ձեռքով հավաքում էին գետնին թափված աղի բեկորները և տանում կապալառուի կողմից նշանակված կշռավարի մոտ. «Հայերի և վրացիների խմբերը իրենց սայլերով, որոնց խառնված էին նաև պարսիկներն ու քրդերը, գոռում-գոչումով յուրաքանչյուրն աշխատում էր առաջ իր աղը կշռի և շուտ ճանապարհ ընկնի,- գրում էր ժամանակի թերթերից մեկը: - Գործավարներից շատերն աչքի էին ընկնում իրենց կոպիտ վարմունքով և հարցումներին կանոնավոր պատասխան տալու փոխարեն՝ անխնա մահակների հարվածներ էին հասցնում, ապտակների և զզվելի հայհոյանքների դիմում: Իսկ դիմացինը լռում էր և համբերությամբ տանում էր այդ բոլորը»<sup>1</sup>:

Կողբի աղահանքերը՝ հյուսիսային և արևելյան ուղղությամբ բարձր ու ցածր հողաբլրային գորշ ու մոխրագույն գազաթներով, ձգվում էին մոտ ութ վերստ հեռավորությամբ և ավարտվում էին Արաքսի մոտ, ապա շարունակվում դեպի Կաղզվան: Աղահանքերից յուրաքանչյուրն ունեցել է իր անունը: Ընդհանրապես դրանք կոչվել են **հին և նոր հանքեր**: Հին հանքերը բացվել են դեռևս պարսից տիրապետության ժամանակ, իսկ նոր հանքերը՝ ռուսների տիրապետության շրջանում: Հանքերից ամենամեծը և հայտնին այսպես կոչված **Թագավորական հանքն** էր, որտեղ աշխատում

<sup>1</sup> «Սուրճ», 1896, թիվ 1, էջ 77:

էին քաղաքական բանտարկյալները: Ճանաչված են եղել նաև **Ղոչաղենց** և **Վելիկենց** անունները կրող հանքերը<sup>1</sup>: Պարսից տիրապետության շրջանում աղի արդյունահանումը կրել է կամայական բնույթ և միայն ռուսական տիրապետության ժամանակ կարգավորվեց ու նշանակվեցին պատասխանատու տեսուչներ:

1885 թվականին աղահանքերը վարձակալության տրվեցին **Ջանփոլադյան** եղբայրներին՝ տարեկան 36.000 ռուբլի վճարով: 1828թ. սկսած մինչև 1885թթ. արդյունահանվել է 40 մլն. փութ աղ: Կոշտ աղի մեկ փութը վաճառվել է 10, իսկ մանր աղինը 6 կոպեկով<sup>2</sup>: Կողբի աղը համարվել է բարձր որակի: Արխիվային գործերից մեկում մեր ձեռքն ընկավ 1920 թվականի մի զեկուցագիր, ուր ամփոփ ներկայացված են Կողբի աղահանքերի հիմնական ցուցանիշները: Նշվում է, որ «Կողբի աղահանքը Հայաստանի մյուս աղահանքերի համեմատությամբ ունի անվիճելի առավելություն, ուստի Կողբի աղը արդյունահանման զարգացման և տրանսպորտային պայմանների բարելավման կարիք է զգում»<sup>3</sup>:

Ձեկուցագրից միաժամանակ պարզ է դառնում, որ ժամանակին աղահանքը բավարարված է եղել սարքավորումներով և օժանդակ շինություններով, ընդհուպ մինչև ծառայողների համար կառուցված բնակարանները: Հետագայում, սակայն, և հատկապես 1918-1920թթ. թուրք-թաթարական և քրդական ասպատակությունների արդյունքում, երբ շրջանը գրավեցին քրդերը, նրանք ամբողջովին այրեցին աղահանքի փայտյա շինությունները, թալանեցին սարքավորումները: Այդուհանդերձ, զեկուցագրի համաձայն, Կողբի աղահանքերում օրական կարելի էր արդյունահանել 150 հազ. փութ աղ, տարեկան կտրվածքով՝ 3,2 մլն. փութ<sup>4</sup>: Այո, մեկ հարցում թուրք մեր գործընկերները իրոք չեն սխալվել. իրենց ազգակիցները իրոք «մեծ մասնակցություն են ունեցել գավառի տնտեսական զարգացման հարցում»: Իսկ թե ինչպես էր արտահայտվում այդ մասնակցությունը, ընթերցողն արդեն պատկերացում կազմեց վերևում մեր կողմից բերված արխիվային վավերագրից: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Սուրմալուի մթերքների իրացմամբ զբաղվել են նաև տեղի քրդերը, որոնք խմբաքանակներով դրանք իրացրել են Թուրքիայի քրդաբնակ վայրերում: Ուրեմն՝ տարել են և ոչ թե բերել:

Ինչ վերաբերում է Կողբի աղի տրանսպորտային ուղիներին, ապա նույն աղբյուրի համաձայն՝ աղը հասցվել է մինչև Սարդարապատ կայարան, այնուհետև՝ Վրաստան և Հայաստանի մյուս վայրեր: Այլ խոսքով, Կողբի աղը բավականին պահանջարկ ունեցող սննդամթերք է եղել:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 80-81:

<sup>2</sup> Материалы для изучения... с.332.

<sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ, այսուհետ՝ ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.197, թ.3

<sup>4</sup> Նույն տեղում:

**Գինետներից** Կողբում բավականին հայտնի էր Շամամենց Կարոյի գինետունը, թեպետ ինչպես ժամանակի մեր հեղինակներից մեկն է նշում. «վերջինս իր գործունեության մեջ բավականին ճարպիկ, հնարագետ և խորամանկ մարդ էր»:<sup>1</sup>

Բնականաբար, Սուրմալուի բոլոր գյուղերն էլ հարկեր և տուրքեր են վճարել պետությանը: Սակայն մեկ փաստ այնուհանդերձ այստեղ ակնառու է արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գավառի թուրքական և քրդական գյուղերի համեմատությամբ, հարկերի մուծման տեսակետից առաջնությունը միանշանակ հայկական գյուղերի կողմն էր: Ասենք, օրինակ, Թոխանշալու գյուղը, որը գավառի հայտնի թուրքական գյուղերից էր, պետությանը վճարում է 67ռ. 50 կոպեկ հարկ, այն դեպքում, երբ հայկական Թեյջրլու գյուղը, որը մեծությամբ գրեթե նույն չափ էր, պետության գանձարան էր մուծում 85ռ. 50 կոպեկ: Բահարլու հայկական գյուղը տարեկան մուծում էր 142ռ. 50 կոպեկ, իսկ քրդական Ջար գյուղը ընդամենը 25 ռուբլի: Նույն վիճակագրությունն էր նաև հայկական մյուս գյուղերում. այսպես, հայկական Բլուրը մուծում էր 230 ռուբլի, Փանիկը՝ 152 ռուբ. 50 կոպեկ, Խալֆալուն՝ 118 ռուբ. 50 կոպ., Ալեթլուն՝ 72 ռուբ. 50 կոպ. և այլն: Դաշբուրուն գյուղը մուծում էր 192 ռուբ. 50 կոպեկ, երբ հարևան թուրքական Կարակոյունլուն, որը բնակչության թվաքանակով գրեթե չէր զիջում հայկականին, մուծում էր ընդամենը 102 ռուբլի: Դրան հակառակ, հայկական Գյուլլուջան /Կուլաբը/, որը թվաքանակով մեծապես զիջում էր Կարակոյունլուին, պետությանը տալիս էր նույնքան, որքան Կարակոյունլուն՝ 102 ռուբլի<sup>2</sup>: Ասվածից դժվար չէ նկատել, որ հայերը գավառում քաղաքական, առավել ևս տնտեսական ու մշակութային կյանքում ունեցել են բացահայտ առավելություն մյուս ազգությունների համեմատ: Եվ այն, որ տուրքերի ու հարկերի տարբերությունն այդքան ակնհայտ էր, միմիայն խոսում է հայերի ծավալած տնտեսական համեմատաբար ակտիվ գործունեության մասին:

Այսպիսին էր Սուրմալու գավառի սոցիալ-տնտեսական զարգացման պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Նրանում աննկատ մնաց տեղի թուրքական տարրը: Ավելին, Սուրմալուի համապարփակ ուսումնասիրության ընթացքում այդպես էլ չհանդիպեցինք այնպիսի մի փաստաթղթի կամ արխիվային վկայության, որը նշեր Սուրմալուի սոցիալ-տնտեսական կյանքում վերջիններիս խաղացած թեկուզ նշմարելի մասնակցության մասին:

<sup>1</sup> «Սուրճ», 1896, թիվ 4, էջ 415:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ. 436, ց.1, գ.64, թ. 80-100:

**Айказ Оганесян, Особенности социально-экономического развития Сурмалинского уезда,** - В статье рассмотрены особенности социально-экономического развития Сурмалинского уезда, представлены все области экономической жизни региона: сельское хозяйство, промышленность, налоговая система и другие важные области их повседневной жизни. В статье доказывается, что во всех отраслях экономической жизни Сурмалинского уезда главную роль играли армяне. Так, только в налоговой системе армяне платили государству три раза больше налогов, чем живущие в уезде турецкое и курдское население.

**Haykaz Hovhannisyan, Features of the social-economic development of Surmalu region-** The article describes the features of the social-economic development of Surmalu region including all areas of economic life of the region: agriculture, industry, tax system and other important areas of their daily lives. It is proved that in all sectors of economic life of Surmalu region Armenians played a major role. Thus, only in the tax system Armenians paid three times more taxes than the Turkish and Kurdish population, who lived in Surmalu region.

**Հայկազ Հովհաննիսյան** –պատմական գիտությունների դոկտոր, Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր: Ուսումնասիրությունների շրջանակը հայոց պատմության նոր շրջանն է, հայ-թուսական հարաբերությունների պատմությունը: